Հայաստանի նկարիչները

ՎԱՀՐԱՄ ԳԱՅՖԷՃԵԱՆ

Կուլտուրական նկարիչ է Գայֆէճեանը՝ եւրոպական մտքով: Ծնուել է 1884 թ. ապրիլի 14ին Ախալցխայում: Մինչեւ ինը տարեկան հասակը սովորում է Ախալցխայի քաղաքային դպրոցում, որից յետոյ անցնում է Մոսկուայի Լազարեան ճեմարանը:

1901 թուին նա աւարտում է ճեմարանը, որից յետոյ մտնում է Մոսկուայի համալսարանի բժշկական ֆակիւլտետը, ուր երկու տարի դիակների վրայ ուսումնասիրում է մարդակազմութիւնը: Յետոյ անցնում է համալսարանի իրաւաբանական ֆակիւլտետը: Այդ ժամանակաշրջանում նա մասնակցում է նաեւ Մոսկուայի Գեղարուեստական Դպրոցի կօնկուրսային քննութեան եւ իր աշխատասիրութիւններով գրաւում է յայտնի նկարիչ Սերովի ուշադրութիւնը, որով եւ ընդունւում է Գեղարուեստական Դպրոցը: Այդտեղ ան ընկնում է գլխաւորապէս իմպրէսիոնիստների խմբակի զօրեղ ազդեցութեան տակ: Այդ շրջանում նա ուսանում է յայտնի նկարիչներ՝ Ա. Վասնեցովի, Ս. Իվանովի եւ գլխաւորապէս Կորովինի մօտ:

Նա Երեւանի Գեղարուեստական Տէխնիկական Դպրոցի վարիչն էր, իսկ այժմ իբրեւ ուսուցիչ պաշտօնավարում է այդ դպրոցում:



Հայ գիւղացի.— Նկար Վահրամ Գայֆէճեանի

Մինչեւ օրս նկարել է նա 200ից աւելի նկարներ, որոնցից յիշենք. «Դրժբախտութիւնը դպրոցում», «Ախալցխայի հրէաների թաղը», «Խոպանուհին բեմի վրայ», «Թիֆլիսի շոգեկառքերի արհեստանոցները», եւն.:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

digitised by A.R.A.R.@